ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 47-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Արդարադատության Նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 42-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2020թվականի դեկտեմբերի 22-ի
N47-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1) Առատաշեն համայնքի 2020թ. Բյուջեի եկամտային մասի համայնքային ենթակայության մանկապարտեզի ծնող գումարը պակասեցնել 2000.0 հազ. դրամով, որը չի գանձվել երկրում տիրող համաճարակային իրավիճակից ելնելով՝ մանկապարտեզ երեխաների չհաճախելու պատճառով:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1)9.1.1 (Նախադպրոցական ուսուցում)-ի 4511 հոդվածից պակասեցնել 2200.0հազ. դրամ:

2)1.1.1 (Համայնքապետարան)–ին 4212 հոդվածին ավելացնել 200.0հազ. դրամ:

3)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 1900.0 հազ. դրամ հատկացում կատարել ֆոնդային բյուջե, որից 1800.0 հազ. դրամը տեղափոխել 9.1.1-ի (Նախադպրոցական ուսուցում) ծրագրի 5113 (Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ Առատաշենի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների ծախսերի համար, 100.0 հազ. դրամը ավելացնել 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/26 ՀՊ3-20
«17» 12 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 259 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/17/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող Մարիամ Խաչատրյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-085

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները, առաջարկում ենք Նախագիծը անվանումը ներկայացնել նորմատիվ իրավական ակտերի վավերապայմաններին ներկայացվող պահանջներին համապատասխան, մասնավորապես անհրաժեշտ է նշել «Որոշում» բառը, որոշման ընդունման տարեթիվը և բնույթը ինչպես նաև այն ընդունող մարմնի անվանումը, իսկ «ՆԱԽԱԳԻԾ» բառն անհրաժեշտ է լրացնել վերևի աջ անկյունում՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:

2. Նախագծի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերն անհրաժեշտ է հանել և նախատեսել հավելվածում:

3. Նախագծի հիմնավորման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:»:

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այնինչ, տվյալ պարագայում նախագծին կից ներկայացված հիմնավորումը թերի է և չի արտացոլում բյուջեում կատարվող փոփոխությունների անհրաժեշտությունը և բուն էությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

12/17/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ

հ/հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	1	2	3	4
1.	ՀՀ արդարադատության նախարարություն, Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն Սուրեն Գալստյան 17.12.2020թ.	1. Անհրաժեշտ է կատարել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված վավերապայմանները: 2. Նախագծի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերն անհրաժեշտ է հանել և նախատեսել հավելվածում: 3. Անհրաժեշտ է խմբագրել նախագծի հիմնավորումը՝ համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի:	Առաջարկություն-ներն ընդունված են ի գիտություն	Առաջարկությամբ ներկայացված խմբագրումները ու թերությունները կատարված են

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ N42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N47-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 47-Ն որոշման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում համայնքի կողմից Առատաշենի մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների համար հատկացվող գումարի պակասող մասի լրացմանը: Այն ապահովում է նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների կատարումը և ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2019թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 42-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N36-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ